ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱՋԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԱՋԱՐԴ Տ. Տ. ՎԱՋԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Եղբայր ի Քրիստոս.

Այսու կը յայտնենք Ձերդ Եղբայրութեան, թէ հաճոյքով և գոհունակութեամբ ստացած ենք Ձեր 3 փետրուար 1964 թուակիր կոնդակը, որով կ՚օրհնէք անթառամ յիշատակը Ս. Աթոռոյս երջանկայիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսին:

Այս առթիւ, Վեհափա՛ռ Եղբայր, հաճեցէք ընդունիլ Մեր և մեր միաբանութեան սրտագին շնորհակալութիւնները և լաւագոյն մաղթանքները Ձեր քաջառողջութեան ու երջանկութեան համար:

կ՚աղօթենք ի բոլոր սրտէ Հայաստանեայց Եկեղեցւոյ անշարժ ու անսասան և հայ ժողովուրդի անխռով պահպանման համար:

Այս առթիւ կը յայտնենք նաև, թէ ստացած ենք Ձեր 15 և 25 յունուար 1964 թուակիր վոյգ պաշտօնագրերը, որոնց պիտի պատասխանենք ի մօտոյ:

Կրկնելով Մեր շնորհակալութիւններն ու սրտագին մաղթանքները Ձեր երջանկութեան ու հայ ժողովուրդի բարօրութեան համար, մնամ եղբայրական սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթակից

ԽՈՐԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

15 փետրուար 1964
ԱՆԹԻԼԻԱՍ